

Կանտ, իր բարոյագիտութիւնը կը հիմնէ *անպայմանական հրամայական-նիւ*<sup>(27)</sup> (Categorical Imperative) վրայ եւ որպէս ընդհանուր եւ ընդհանրացման առակ օրէնք կը նշէ հետեւեալ բանաձեւը.-

«Վարուէ՛ միայն այնպիսի անձնական կանոնով (մաքսիմ), որով միաժամանակ կարենաս ցանկալ, որ այդ՝ ընդհանուր օրէնք դառնայ:»

Այլ խօսքով, այս բանաձեւով կը ներկայացուի՝ մարդուն պարտաւորութիւնը, գործնական բացարձակ հրամայականով մը, առանց որեւէ նախապայմանի: Օրինակ, եթէ ճշմարտախօսութիւնը ընդհանուր բարոյական օրէնք պէտք է դառնայ, ուրեմն ըստ Կանտի, որեւէ ստախօսութիւն (առանց բացառութեան) արգիլուած պիտի ըլլայ: Վերոյիշեալ կանոնը, որու մասին Կանտ կը խօսի, ենթակայական շարժառիթն է, ի տարբերութիւն օրէնքին, որ ամէն բանէ առաջ՝ առարկայական պարտաւորութիւն մըն է:

Կանտի խստապահանջ ու հրամայական բարոյագիտութիւնը հիմնովին պարտագիտական (deontological) է. այսինքն՝ ոչ թէ մարդու հակումները, կարիքները, մղումները ու հետաքրքրութիւնները կ'որոշեն անոր վարմունքը, այլ միայն ու միայն ինքնաբոլիս պարտաւորութիւնը: Կանտի համար վարմունքի մը պարտաւորութիւնը որքան զօրաւոր ու խիստ ըլլայ, այնքան աւելի բարոյական կը դառնայ արարքը: Օրինակ, ըստ Կանտի, բարեգործութիւնը, որ ընկերութեան մէջ ձգտելի ու արժէքաւոր արարք մըն է, բարոյապէս աւելի արժէքաւոր կը դառնայ այն ատեն, երբ ենթական միայն ինքնաբոլիս պարտաւորութեան տակ կատարէ, առանց որեւէ սպասումի, հակումի կամ մեծամտութեան:

Կանտի բարոյական սկզբունքի նախապայմանը ենթակային գերիշխանութիւնն ու կամքի ինքնավարութիւնն է, հիմնուելով անոր ազատութեան վրայ: Իսկ *ազատութիւնը*<sup>(28)</sup>, Կանտի համար, կարելի շարժառիթներէն որեւէ մէկը ընտրելը չէ, այլ նման շարժառիթներէն անկախ ըլլալն է... այսուհանդերձ բարոյական վարմունքի հիմքը կը կազմէ՝ զուտ բանականութենէն բխած շարժառիթը, որ պարտաւորիչ բնոյթ ունի:

Բարոյագիտութեան պատմութեան մէջ, Իմմանուէլ Կանտ կը մնայ խստապահանջ պարտաւորութեան ու «անպայմանական հրամայական»ի բարոյախօսը, որ հակառակ է որեւէ զգացական բարոյագիտութեան:

## ➤ Ա. Շոպենհաուր

Գերման նշանաւոր փիլիսոփայ Արթուր Շոպենհաուր կը կրէ ազդեցութիւնը՝ Պլատոնի, Կանտի, բայց նաեւ հնդկական կրօնա-փիլիսոփայութեան: Իր գլխաւոր երկն է՝ «Աշխարհը որպէս կամք եւ պատկերացում» (գերմ. բնագիր՝

---

(27) **Անպայմանական հրամայական** (Categorical Imperative) բառակապակցութեան մասին, տե՛ս Մաս – 5ի Կանտի «պարտագիտական բարոյագիտութեան» մէջ յատուկ բաժինը, էջ 168:

(28) **Ազատութիւն** (Freedom) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, էջ 370: